

**ПРАВО**

**«Մասնավոր դելիկտի» տեսությունը, և դրա արտահայտությունները մասնավոր մեղադրանքի գործերի կազմակերպման նախագծային կարգավորումների վրա**

*Ղազարյան Ա. Ա.*

*ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի քրեական դատավարության ամբիոնի ավագ դասախոս (Երևան, Հայաստան)  
artakghaz@gmail.com*

**Վճռորոշ բառեր՝** մասնավոր մեղադրանք, պետական մեղադրանք, մասնավոր անձի կողմից իրականացվող մեղադրանք, «մասնավոր դելիկտի» տեսություն

**Теория "частного деликта" и её выражение в проектных положениях организации дел частного обвинения**

*Казарян А. А.*

*Кафедра уголовного процесса Академии Образовательного комплекса полиции РА (Ереван, Армения)  
artakghaz@gmail.com*

**Аннотация:** В статье раскрывается сущность и основные идеи теории "частного деликта", одной из теорий, обосновывающих институт дел частного обвинения. Автор подвергает теорию **критическому анализу, и в этом свете выявляет** отражение критикуемой им теории в положениях Проекта нового Уголовно-процессуального кодекса РА, делая предложения по их исправлению.

**Ключевые слова:** частное обвинение, государственное обвинение, обвинение, осуществляемое частным лицом, теория "частного деликта"

**The theory of "private delict" and its expression on the project provisions of the organization of private prosecution cases**

*Ghazaryan A. A.*

*The Criminal Procedure Department of the Academy of the Educational Complex of RA Police  
(Yerevan, Armenia)  
artakghaz@gmail.com*

**Abstract:** The article reveals the essence and main ideas of the theory of "private delict", one of the theories substantiating the institution of private prosecution cases.

The author subjects the theory to a critical analysis, and in this light reveals the reflection of the criticized theory in the provisions of the draft new Criminal procedure code of the Republic of Armenia, making suggestions for their correction.

**Keywords:** private prosecution, public prosecution, prosecution carried out by a private person, the theory of "private delict"

Եթե սկզբնապես՝ վաղնջական ժամանակներում, հանցագործության և պատժի մասնավոր-իրավական ընկալումների պայմաններում հանցագործություններին «արձագանքելը» տուժողի (նրա ընտանիքի անդամների) մասնավոր գործն էր, հետևաբար և այդպիսի «մասնավոր հանցագործություններով»<sup>1</sup> և՛ հետապնդման հարուցումը, և՛ թե հետապնդման

իրականցումը ամբողջությամբ թողնվում էր վերջինիս ինքնագործունեությանն ու կամքին, ապա արդեն իրավիճակը բոլորովին այլ լուծում է ստանում հանցագործության հանրային-իրավական ընկալման գիտակցության պայմաններում: Ընկալումների այդպիսի փոփոխության պայմաններում քրեական հետապնդման հարուցումն ու իրականցումը աստիճանաբար պետք է «դուրս գար» հանցագործությունից տուժողի (նրա ընտանիքի անդամների) ինքնագործունեության շրջանակներից՝

<sup>1</sup> Վաղ ժամանակներում հանցագործության և պատժի մասնավոր իրավական ընկալման մասին տե՛ս [8, էջեր 9-10; 14, էջ 66; 16, էջ 2; 18, էջ 36; 21, էջեր 8, 68-69]:

հանգեցնելով քրեական դատավարության «հանրայնացման»: Սակայն քրեական դատավարության «հանրայնացումը», իր հերթին, տեղի էր ունենում ոչ թե միանգամից, այլ աստիճանաբար:

Սկզբնական շրջանում որաշակի արարքների (գործեր) հանրային-իրավական գիտակցումը շարունակում էր մնալ շատ թույլ: Այս գործերի դեպքում, կար այն գիտակցումը, որ դրանք առավելապես վնասում էին հանցագործությունից տուժած անձին [19, էջ 87]:

Հենց այս գաղափարի ազդեցությամբ էլ 19-րդ դարի գիտական միտքը մշակում է «մասնավոր մեղադրանքի գործերի» ինստիտուտը մեկնաբանող տեսություններից մեկը, որը գիտության մեջ պայմանականորեն անվանվել է «մասնավոր դելիկտի» տեսություն:

Այս տեսությունը, «մասնավոր մեղադրանքի գործերի» ինստիտուտի գոյությունը բացատրում էր նրանով, որ որոշ հանցագործություններ առավելապես վնասում են հանցագործությունից տուժած անձին և փաստացի չեն վնասում, կամ, ավելի ճիշտ, այնքան չնչին վնաս են հասցնում հանրությանը, որ այդպիսի հանցագործությունների քննությունը և դրա հետագա ընթացքը պետք է կախվածության մեջ դրվեն հանցանքից տուժած անձի կամքից:

Այսպես գերմանացի իրավաբան Օսկար Մեեսը այս առումով գրում էր, որ տվյալ հանցավոր արարքները այնչափ են առնչվում տուժողի անձնական շահերին, որ «...ընդհանուր կարգի ու ընդհանուր իրավական գիտակցության խախտումը դրանցում խաղում է ընդամենը երկրորդային դեր»<sup>2</sup>: Մեկ այլ հեղինակ՝ Կառլ Գուստավ Գեյբը գերմանական քրեական իրավունքի իր դասագրքում «բողոքով հետապնդվող հանցագործությունները» պայմանավորում էր երկու տարբեր հիմքերով, որոնցից առաջինը ըստ նրա կայանում էր նրանում, որ «որոշ հանցագործությունների դեպքում օբյեկտիվ վտանգավորությունը այնքան չնչին է», որ պատիժը նշանակվում է «*առավելապես տուժողի իրավական գիտակցությունը հանդարտացնելու, քան թե հանրային շահի համար*»<sup>3</sup>: Համանման դիրքորոշում է

արտահայտել գերմանացի ականավոր գիտնական Զ. Ջաքարիան, ով նույնպես զբաղվել է հարցի ուսումնասիրմամբ: Նա «մասնավոր մեղադրանքի գործերի» գոյությունը պայմանավորել է երեք տարբեր հիմքերով: Դրանցից մեկն էլ ըստ նրա այն է, որ որոշ հանցագործություններով պատիժը պետք է ունենա ոչ թե պետությանը, այլ տուժողին բավարարելու (privatsatisfaction) նպատակ, ով, հնարավոր է, դիմեր վրեժխնդրության, եթե բացակայեր պետական պատիժը<sup>4</sup>:

Պետք է ընդգծել, որ հենց այս տեսությունն է խորը ազդեցություն ունեցել եվրոպական մի շարք երկրների օրենսդրությունների վրա: Ավելին «մասնավոր մեղադրանքի գործերի» գոյությունը պայմանավորող այս մոտեցումը, իր համակիրներն ունեցավ ինչպես մինչհեղափոխական, այնպես էլ խորհրդային և հետխորհրդային ռուս գիտնականների շրջանում:

Օրինակ, ականավոր դատավարագետ Ն. Ռոզինը, այդպիսի գործերի առանձնացման հիմքերից մեկի մասին խոսելիս, նույնպես ելնելով այս տեսության գաղափարներից նկատում էր. «...պետությունը, այս կամ այն իրավախախտող արարքների պատժելիությունը հռչակելով և իր վրա ընդունելով դրանց իրական պատժելու պարտականությունը, ոչ միշտ է դրանում ուղղակիորեն շահագրգռված: Ուստի նա կարող է որոշակի հատուկ դատավարական պայմաններ և նախապայմաններ ստեղծել այդպիսի արարքների հետապնդման համար, որոնք առավելապես մասնավոր շահերին են վնաս հասցնում ու քիչ են շոշափում հանրային շահը...» [17, էջ 237]: Ի. Ֆոյնիցկին իր հերթին, այս գործերը նույնացնում է «*delicta privata*»-ի հետ՝ նկատելով դրանցով տուժողները պահպանում են մասնավոր մեղադրանքի բացառիկ իրավունքը [22, էջ 17]:

Արդեն սովետական շրջանում այս մոտեցումների դրսևորում կարելի է գնահատել, օրինակ, խորհրդային ականավոր դատավարագետ Մ.Չելցովի այն դիտարկումները, որ. «...այդ տեսակ ոստնագության յուրաքանչյուր դեպքում իրավակարգը այնքան քիչ է խախտվում, որ օրենսդիրը մեղավորին հետապնդելու և հետապնդելուց հրաժարվելու իրավունք

<sup>2</sup> O. Meves, *Strafgesetz-Novelle // Bezold Gesetzgebung des deutschen Reichs III*, մեջբերումն ըստ [16, էջ 41]:

<sup>3</sup> K. Geib, *Lehrbuch Des Deutschen Strafrechts*, մեջբերումն ըստ [16, էջ 44]:

<sup>4</sup> Zachariä H. A., *Von den Verbrechen, welche nur auf Antrag des Verletzten verfolgt und bestraft werden sollen, 1847*: Մեջբերումն ըստ [19, էջ 339-340]:

է վերապահում հանցագործությունից տուժածին» [20, էջ 186]:

Այսպիսով՝ տեսության առաջ քաշած գերզաղափարը, այն է՝ որոշ հանցագործություններով հասարակական կարգը չի խախտվում, հանրային շահը չի վնասվում (կամ գրեթե չի վնասվում), և վնասում են (առավելապես վնասում են) հանցանքից տուժողի մասնավոր շահերը, հետևաբար՝ հանցանքին հետևող պատիժն էլ այս դեպքում դիտարկվում է իբրև (առավելապես իբրև) «տուժողին բավարարելու միջոց»: Տվյալ դատողությունների տրամաբանական զարգացման արդյունքում ակամայից արվելու է հետևյալ եզրահանգումը. *նշված հանցագործություններով քրեաիրավական հարաբերությունները ծագում են հանցանք կատարած անձի և տուժողի միջև (SIC!) (ինչը խիստ խորթ է հնչում առնվազն մեր ժամանակների համար):* Ուղիղ այսպիսի արձանագրում, արդեն մեր օրերում արվում է գրականության մեջ: Դատավարագետ Ն.Կովտունը հարցի առնչությամբ նշում է. «Իրականում քրեաիրավական հարաբերությունը այս իրավիճակում ծագում և գոյություն է ունենում ոչ թե «պետություն-հանցագործ», այլ «տուժող-հանցագործ» սուբյեկտային կազմով... պետությունը... չունի և չի էլ կարող ունենալ իրավական պահանջներ հանցանք կատարած անձի նկատմամբ, քանի որ նրա իրավունքներն ու շահերը այստեղ չեն խախտվել, իսկ վիճելի իրավահարաբերությունները իրեն չեն պատկանում» [9, էջ 69]: Ոմանք, արդեն ավելի առաջ գնալով, նկատում են, որ տվյալ գործերով տուժողի կամքով է պայմանավորվում քրեաիրավական հարաբերությունների առաջացումը [13, էջ 105]: Այդպիսով պետք է

փաստել, որ տեսության շրջանակներում ընդգծվում է հանցագործությունից տուժողի բողոքի ինչպես **նյութաիրավական բնույթը** (հետևաբար այս գործերի շրջանակը պետք է նախատեսվի քրեական օրենսգրքով) այնպես էլ՝ **դատավարականը**:

Նշված տեսության գաղափարներն ուղղակորեն ազդում են այդ գործերով մեղադրանքի կազմակերպման ձևի վրա:

Եթե այս շրջանակի գործերով վնաս է հասցվում (առավելապես վնասվում է) հանցանքից տուժողի մասնավոր շահերին և պատիժն էլ հանդես է գալիս իբրև վերջինիս «բավարարման» միջոց, ապա բնական է, որ քրեական **դատավարության հանրային մարմինները՝ այս տեսակ գործերով մեղադրանք չպետք է պաշտպանեն** (չէ՞ որ նրանք գործում են ուղղակիորեն հանրային շահի պաշտպանության նպատակով), և **այդ գործերով քրեական հետապնդման և հարուցումը, և իրականացումը պետք է վերապահվի միայն հանցանքից տուժողին** (նրա մերձավոր ազգականներին): Այստեղից էլ այս տեսության շրջանակներում տուժողի բողոքը «ձուլվում է» նրա կողմից իրականացվող մասնավոր մեղադրանքի հետ<sup>6</sup> (քանի որ բողոքով տուժողը սկսում է իրացնել մասնավոր մեղադրանքը, և միաժամանակ՝ այս գործերով, ինչպես արդեն նշվեց, բացառվում էր հանրային մեղադրանքի իրացումը) բողոքը փաստացիորեն վերածելով քրեական հայցի:

Մյուս կողմից՝ եթե տվյալ գործերով պատիժը, ինչպես արդեն նշվեց, ունի տուժողին և ոչ թե հանրային շահը «բավարարելու» նպատակ, ստացվում է, որ իրականում այս գործերով պատժելու իրավունքը (jus puniendi) պատկանում է ոչ թե պետությանը, այլ՝ հան-

<sup>5</sup> Այս տեսության յուրօրինակ արտացոլանք կարելի է համարել ՀՀ Վճռաբեկ դատարանի ԵԱՔԴ/0217/01/14 որոշման մեջ արտահայտած այն դիրքորոշումը, որ «...հաշտության քրեաիրավական և քրեադատավարական ինստիտուտները համապատասխանաբար «անձ և պետություն» ու «անձ և տուժող» քրեաիրավական վեճի հաղթահարման կառուցակարգեր են» (ընգծումները իմն են- Ա.Դ.): Այսինքն՝ Վճռաբեկ դատարանն իր որոշմամբ արձանագրում է, որ քրեաիրավական վեճ կարող է առաջանալ անձի և տուժողի միջև, և այդ քրեաիրավական վեճի հաղթահարմանն է ուղղված մասնավոր մեղադրանքի ինստիտուտը:

Հայկական քրեադատավարական գրականության մեջ նույնպես կարող ենք տեսնել քննարկվող տեսության սաղմնային դրսևորման արտացոլանքներ: Այսպես, օրի-

նակ, Ն. Ավետիսյանը քննարկելով մասնավոր մեղադրանքի ինստիտուտի էությունը նշում է. «Այն դեպքում, երբ հանցավոր ոտնձգության օբյեկտ է համարվում հանրային, պետական շահը, պետությունը պարտավոր է իրավապաշտպան միջոցառումներ կիրառել սոցիալական արդարության վերականգնման համար: Իսկ եթե կատարված հանցագործությունը շոշափում է **միայն** քաղաքացիների մասնավոր իրավունքը, քրեական դատավարական գործունեությանն ակտիվ մասնակցություն պետք է ունենա ոչ միայն պետական մարմինները, այլ մասնավոր անձինք» [6, էջ 141]:

<sup>6</sup> Համանման տեսակետ գրականության մեջ արտահայտել է նաև դատավարագետ Տաուբերը: Մանրամասն տե՛ս [19, էջ 347]:

ցանքից տուժողին, ում կամքից է կախված է՝ քրեական պատիժը կունկրետ դեպքում վրա հասնելու անհրաժեշտությունը [19, էջ 388-389]:

Այսինքն արդեն այս տեսության գաղափարների հետևողական առաջ քաշման դեպքում պետք է փաստենք, որ տուժողը հանդես է գալիս թե՛ իբրև պատժի նյութական իրավունքի, և թե՛ քրեական հայցի նյութական իրավունքի տեր, հետևաբար դատավարությունում հանդես է գալիս և՛ իբրև նյութական քրեական հայցվոր (*criminal actor*), և՛ իբրև դատավարական քրեական հայցվոր (*criminal klager*)<sup>8</sup> **բացառելով դատախազի** (հանրային մարմնի) **մասնակցությունը քրեական հետապնդմանը** (քանի որ վերջիններս որպես կանոն վարույթին մասնակցում են **ուղղակիորեն հանրային շահի** ապահովման նպատակով)<sup>9</sup>:

<sup>7</sup> Մեր ժամանակներում համանման դիրքորոշում է արտահայտել դատավարագետ Ե. Վասիլևան, տե՛ս [7, էջ 276]:

<sup>8</sup> Նյութական քրեական հայցվորի և դատավարական քրեական հայցվորի մասին մանրամասն տե՛ս [7, էջ 256-265]:

<sup>9</sup> Մոսկվայի պետական համալսարանի դատավարագետները այս առնչությամբ նշում են. «Այդպիսի մարմինները (վարույթի հանրային (պետական) մասնակիցները՝ Ա.Ղ.) իրենց պաշտոնական պարտականությունների հիման վրա **միշտ պարտավոր են գործել ելնելով հանրային (հասարակական) շահերից**, ինչը բացառում է նրանց նկատմամբ մասնավոր-իրավական տրամաբանության կիրառման նույնիսկ տեսական հնարավորությունը, և **իրենց գործունեությունը ամբողջությամբ ենթարկում է հանրային-իրավական հիմքերին...** ցանկացած պետական մարմնի ֆինանսավորվում է պետական բյուջեից, որը ձևավորվում է հանրության բոլոր անդամների հարկային վճարումներից, ինչը **բացառում է հանրային-իրավական գործառույթներ իրականացնող համապատասխան պետական մարմնի վերածումը առանց հասարակական շահի հաշվառման առանձին անձի կամքով ղեկավարվող «գործիքի»** [12, էջ 281-282]: Այս համատեքստում խիստ կարևոր դիտարկում է անում նաև դատավարագետ Ա. Կոզլովան. «...պաշտոնատար անձանց գործի ելքով «շահագրգռված չլինելը», մի կողմից նրանց գործողությունների օբյեկտիվության և անկողմնակալության երաշխիք է, մյուս կողմից նրանց կողմից անանձնավորված և «վերանձնային» տիպի շահի՝ **պետության և ամբողջ հանրության հանրային-իրավական շահի պաշտպանության երաշխիք է**: Հանրային շահի պաշտպանությունը հանդիսանում է հանրայնության սուբյեկտների կողմից իրենց կարգավիճակային բնութագրիչները սեփականացնելու օրինաչափ պատշառ. նրանք օժտված են պետության ներկայացուցչի իշխանական կարգավիճակով և նրա լիազորությունների կրողն են **կունկրետ նպատակով՝ պետության**

*Մրանից էլ բխում է, որ տուժողն այս գործերով պետք է ունենա քրեական հետապնդման հարուցման և իրացման, այն դադարեցնելու անվերապահ ազատություն, ինքնագործունեության հնարավորություն:*

Սա էլ իր հերթին հանգեցնում է տվյալ գործերով պետության խիստ սահմանափակվածությանը: «...Պետության դերը այդ գործերով պետք է սահմանափակվի տուժողին դատական պաշտպանության այն իրավունքը տրամադրելով, ինչպիսին նա տրամադրում է անձանց, որոնք իրենց խախտված քաղաքացիական իրավունքների վերականգնում են փնտրում» [19, էջ 347]:

*Իսկ այդպիսի մեղադրանք, հնարավոր է դառնում կառուցել միայն «մաքուր» մրցակցային դատավարությունում՝ խիստ պասիվ, անկախ ու անկողմնակալ դատարանի առջև երկու հավասար կողմերի մրցակցություն դեպքում միայն:*

Շարունակելով զարգացնել տեսության գաղափարներից բխող հետևությունները պետք է փաստենք, որ տուժողի՝ պատժի իրավունքի տեր լինելու հանգամանքից պետք է բխեցնել նաև վերջինիս՝ իր այդ իրավունքը քրեական դատավարության ավարտից հետո՝ դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո, իրացնելու հնարավորության մասին: Այս տեսության գաղափարներն հետևողականորեն առաջ քաշելու դեպքում, տուժողը պետք է ունենա հանցանք կատարած անձի հետ հաշտվելու, նրան ներելու իրավունք, նաև այդ անձի նկատմամբ կայացված դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո, պատժի կրման ընթացքում՝ ինչն էլ պետք է հանգեցնի վերջինիս պատժից ազատելուն<sup>10</sup>:

**անունից հանրային («համաժողովրդական») շահերի իրացման և պաշտպանության նպատակով»** [10, էջ 35]:

<sup>10</sup> Այդպիսի կարգավորում եղել օրինակ, 1852 թ. ավստրիական քրեական դատավարության օրենսգրքով «ամուսնական անհավատարմության» դեպքում (այն հանդիսանում էր հանցագործություն և ընդգրկված էր մասնավոր մեղադրանքի գործերի շրջանակում), որի պարագայում փաստացիորեն տուժող ամուսնու կողմից բողոքը հետ վերցնելու հնարավորություն էր նախատեսվում նաև այն անհավատարիմ ամուսնում պատիժ կրելու պարագայում: Այս դեպքում տուժող ամուսինը «բողոքը հետ էր վերցնում» իր՝ մեղավոր ամուսնու հետ ապրելու ցանկության մասին հայտարարելով՝ ինչն էլ որպես հետևանք հանգեցնում էր վերջինիս պատժից

Անդրադառնալով «մասնավոր դելիկտի» տեսության «թույլ կողմին», ինչը մեր համոզմամբ «խարխլում է» տվյալ տեսության հիմքերը, պետք է փաստել որ այն հանցագործության ժամանակակից պատկերացումներից խիստ հեռու ընկալումների վրա է հիմնված:

Այս տեսության մեխը, ինչպես արդեն նշվեց վերևում, կայանում էր նրանում, որ հանցագործությամբ հանրային շահ չի վնասվում (գրեթե չի վնասվում) և հետևաբար դրա հետապնդումը ոչ թե հանրային, այլ մասնավոր կարգով պետք է իրականացվի՝ ի ապահովումն մասնավոր շահերի: Մակայն այս մոտեցումը ոչ միայն չի համապատասխանում ներկա ժամանակների՝ հանցագործության՝ հանրորեն վտանգավոր արարք լինելու պատկերացումներին, այլ նույնիսկ դեռևս մեկ հարյուրամյակ առաջ գնահատվել է իբրև անախրոնիզմ (ժամանակավրեպություն)<sup>11</sup>:

Ներկա ժամանակներում հանցանքի հանրային վտանգավորության հատկակնիշը (հետևաբար և՛ դրանով հանրային շահը վնասվելու հանգամանքը) գրականության մեջ դիտարկվում է իբրև «կասկած չհարուցող» [1, էջ 505], իբրև արարքի քրեականացման հիմք (սկզբունք) [11, էջ 348]՝ միաժամանակ ընդդեմով այս հարցում հանրային վտանգավորության «բացառիկ բնույթը» [5, էջ 97]: Հետևաբար բոլոր այն դեպքերում, երբ արարքը «չի վնասում» կամ «գրեթե չի վնասում» հանրային շահը, այդ արարքը ոչ թե պետք է ընգրկվի «մասնավոր մեղադրանքի գործերի» շարքում, այլ՝ ապաքրեականացվի: Այստեղ մեզ մնում է միանալ «մասնավոր դելիկտի» տեսության՝ Տաուբերի դեռևս մեկ դար արված քննադատությանը. «Երկուսից մեկը, կամ այդ արարքը չի ոտնձգում հանրային շահին, և խախտում է միայն մասնավոր անձանց շահերը, հետևաբար այս դեպքում հարկ չկա այն ներառել քրեական

հանցագործությունների շարքում, և թող անձը, ով տուժել է այդ արարքից իր իրավունքը վերականգնի քաղաքացիական դատավարության կարգով... կամ այդ արարքը ոտնձգում է հանրային շահի դեմ, և այդ դեպքում, անհրաժեշտ է, որ պետական մարմինները մասնավոր անձանց կամքից անկախ այն հետապնդելու հնարավորություն ունենան» [19, էջ 350-351]:

Մակայն, պետք է փաստել, որ նույնիսկ ժամանակակից պայմաններում կարելի է արձանագրել առաջարկվող իրավակարգավորումներ, որտեղ կարելի է նշմարել «մասնավոր դելիկտի» տեսության արտահայտություններ: Որպես օրինակ կարող է ծառայել ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի մասնավոր մեղադրանքի գործերով առաջարկվող կարգավորումները:

Եվ եթե փորձենք խմբավորել մասնավոր մեղադրանքի գործերով նախագծային մոդելով արտացոլվող պատկերը, ապա պետք է փաստենք, որ այն «խիստ նմանվում է» «մասնավոր դելիկտի» տեսության հետևություններին:

Առաջին՝ այստեղ «մասնավոր մեղադրանքի գործերը» «դուրս են բերվել» քրեական դատավարության օրենսգրքից (նախագծից) և սահմանվում են քրեական օրենսգրքով (Քրեական օրենսգրքի նախագծի 16-րդ հոդված):

Երկրորդ՝ այս գործերով մեղադրանքը (չհաշված եզակի բացառությունները) կազմակերպված է հիմնական մասնավոր մեղադրանքի կարգով (Քրեական դատավարության օրենսգրքի նախագծի<sup>12</sup> 11-րդ հոդվածի 2-րդ մաս, 451-րդ հոդված) և պետությունը հանձին դատախազության «զերծ է մնում» այդ գործերով մեղադրանքից, այն զրկված է տվյալ գործերով մեղադրանքի իրականացմանը ներգրավելու հնարավորությունից<sup>13</sup>: Իսկ բոլոր

ազատմանը (1852թ Ավստրիայի քր.դատ.օր-ի 503-րդ հոդված մեջբերված է ըստ [19, էջ 165]:

<sup>11</sup> Տե՛ս, օրինակ, [19, էջ 350-351]: Գերմանացի գիտնականներ Ռ.Գնեյստը և Ֆ. Հոլցենդորֆը այս առումով դեռևս 1800-ականների վերջերում գրված իրենց աշխատություններում նկատում էին, որ տուժողին քրեական հայցի իրավունք վերապահելը վերջինիս բավարարության համար ոչ այլ ինչ է քան քրեական իրավունք միջնադարյան գաղափարի ներմուծում տե՛ս [15, էջ 11]:

<sup>12</sup> Այսուհետ նաև՝ Նախագիծ:

<sup>13</sup> Բացառություն են կազմում Նախագծի 11-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով, ինչպես նաև 451-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքերում վարույթի հարուցման դեպքերը:

Ինչ վերաբերվում է այս գործերով **դատախազի մասնակցությանը**, ապա նախագծային կարգավորումներով դա հնարավոր է դառնում ընտանիքում բռնության հատկանիշներով հանցանքներով, ինչպես նաև անձի իր անօգնական վիճակի կամ ենթադրյալ վնաս պատճառողից կախվածության մեջ լինելու փաստի ուժով իր

այն դեպքերում, երբ վարույթով հետապնդումը ինչ-ինչ հանգամանքներով պայմանավորված իրականացված է եղել հանրային կարգով, սակայն դրա հետագա ընթացքում պարզվում է, որ այդ արարքը ենթակա է հետապնդման մասնավոր մեղադրանքի կարգով, այլ կերպ ասած, պարզվում է, որ արարքը դասվում է մասնավոր մեղադրանքի գործերի շարքին, ապա այդ դեպքում գործի վարույթը պետք է կարճվի և/կամ հետապնդումը դադարեցվի արդարացման հիմքով (անձը ձեռք է բերում ռեաբիլիտացիա պահանջելու իրավունք (Նախագծի 12-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետ, 12-րդ հոդվածի 2-րդ մաս, 13-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ կետեր)):

Այսպիսի կանոնակարգումը, որը մի կողմից «գրկում է» պետությանը քրեական հետապնդման հարուցման և իրացման լիազորությունից, մյուս կողմից այդպիսի իրավասությանը է **օժտում բացառապես տուժողին** (նրա ներկայացուցիչներին) վկայում է այդպիսի հանցագործություններով և՛ պատժի, և՛ քրեական հայցի նյութական իրավունքը հանցանքից տուժած անձին պատկանելու մասին (ինչն էլ հանդիսանում էր «մասնավոր դեղիկտի» տեսության կորիզը):

Երրորդ՝ տուժողն այստեղ մեղադրանքը տնօրինում է՝ ունենալով և քրեական հայց հարուցելու, և դրանից ամբողջությամբ կամ մասնակի հրաժարվելու լիազորություն (Նախագծի 455-րդ հոդվածի 5-րդ մաս) (այն դեպ-

քում, երբ հանրային մեղադրանքի գործերով այսպիսի լիազորություն չունի դատախազը SIC! (Նախագծի 277-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասեր)), որը նույնպես վկայում է այս մոդելում տուժողի և՛ իբրև դատավարական, և՛ իբրև նյութական քրեական հայցվոր լինելու մասին:

Չորրորդ՝ այն որ, նախագծային մոտեցմամբ և՛ պատժի, և՛ քրեական հայցի նյութական իրավունքի «իրական տերը» հանդիսանում է տուժողը, ակնհայտ է դառնում նաև քրեական օրենսգրքի նախագծի կարգավորումներից: Քրեական օրենսգրքի նախագծի 16-րդ հոդվածով սահմանվում է «մասնավոր մեղադրանքի գործերի» շրջանակը, որտեղ սահմանվում է, որ «անձը *կարող է ենթարկվել քրեական պատասխանատվության միայն հանցագործությունից* տուժած անձի հայցի հիման վրա»: Այսինքն, բոլոր այն դեպքերում, երբ կատարվի «մասնավոր մեղադրանքի գործերի» շրջանակում ընդգրկված արարք, միաժամանակ բացակայի տուժած անձի հայցը՝ անձ չի կարող ենթարկվել քրեական պատասխանատվության, ինչը ենթադրում է, որ մինչ տուժած անձի կողմից դատարան հայց ներկայացնելը, այդ արարքը չի կարող **պատժելի լինել**: Մյուս կողմից՝ արձանագրելով, որ արարքի պատժելիությունը (հակաիրավակա-նությունը) հանդիսանում է հանցանքի հատկանիշ<sup>14</sup>, ստացվում է, որ այսպիսի կարգավորման դեպքում, մինչ տուժած անձի կողմից հայց ներկայացնելը, չենք կարող խոսել տվյալ արարքի հանցանք լինելու մասին<sup>15</sup>:

---

իրավաչափ շահերը պաշտպանել չկարողանալու դեպքում միայն (Նախագծի 11-րդ հոդվածի 4-րդ մաս):

Վերոգրյալից ստացվում է, որ պետությունը (հանձնես դատախազի) ձեռնպահ է մնում այս գործերով քրեական հետապնդում իրականացնելուց, ավելին՝ բացի վերոնշյալ բացառիկ դեպքերից, **դատախազը նույնիսկ հնարավորություն չի ունենում մասնավոր մեղադրանքի գործով վարույթին ներգրավվելու**: Եվ օրինակ այն դեպքում, երբ անձը ունակ է իր շահերը արդյունավետ պաշտպանելու, չի գտվում անօգնական վիճակում կամ ենթադրյալ հանցանք կատարած անձից կախվածության մեջ, ինչպես նաև այդ անձի նկատմամբ կատարված արարքը չի պարունակում ընտանիքում բռնության հատկանիշներ, այդ դեպքերում, դատախազի մասնակցությունը վարույթին բացառվում է: Բացի այդ պետք է նկատենք, որ Նախագծի այդ դրույթը իր հերթին հակասության մեջ է գտնվում իր նյութաիրավական հենքի հետ՝ մասնավորապես քրեական օրենսգրքի նախագծի 16-րդ հոդվածում որևէ բացառություն, որը կվերապահեր մասնավոր մեղադրանքի գործերով դատախազի մասնակցություն, արված չէ:

---

<sup>14</sup> Արարքի պատժելիությունը հանցանքի հատկանիշ լինելու մասին մանրամասն տե՛ս [1, էջ 509-511]:

<sup>15</sup> Քրեական օրենսգրքում այսպիսի կանոնակարգման առկայության դեպքում փաստացիորեն անիրագործելի է դառնում քրեական դատավարության օրենսգրքի նախագծի 11-րդ հոդվածի 4-րդ մասով արված բացառությունները, ըստ որի դատախազն, անկախ քրեական հայց ներկայացնելուց կամ քրեական հայցից հրաժարվելուց, իրավասու է քրեական հետապնդում իրականացնել հանրային կարգով, ընտանիքում բռնության հատկանիշներով հանցանքներով, ինչպես նաև 22 քրեական օրենսգրքի 16-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքներով (մասնավոր մեղադրանքի գործերով- Ա.Դ), եթե անձն իր անօգնական վիճակի կամ ենթադրյալ վնաս պատճառողից կախվածության մեջ լինելու փաստի ուժով չի կարող պաշտպանել իր իրավաչափ շահերը:

Բանն այն է, որ եթե, օրինակ, անձը «մասնավոր մեղադրանքի գործով» գտնվելով ենթադրյալ վնաս պատճառ-

Եզրահանգելով, պետք է փաստենք՝ «մասնավոր մեղադրանքի գործերով» մեղադրանքի կազմակերպման նախագծային մոդելը իր կառուցվածքով «խիստ մոտ է» «մասնավոր դեղիկտի» տեսության գաղափարներից բխող հետևություններին (որը, ինչպես ներկայացվեց վերևում, արժանի է խիստ քննադատության և հանդիսանում է ժամանակավրեպություն), հետևաբար և որոշկի բարեփոխման կարիք ունի՝ այդ գործերով նախատեսելով վարույթին դատախազի յուրաքանչյուր դեպքում սեփական նախաձեռնությամբ ներգրավվելու հնարավորություն<sup>16</sup>:

դից կախվածության մեջ, հայց չներկայացնի, սակայն դատախազը առաջնորդվի քրեական դատավարության օրենսգրքի (Նախագծի) 11-րդ հոդվածի 4-րդ մասով և քրեական հետապնդում իրականացնի կատացվի, որ անձի նկատմամբ իրականացվում է քրեական հետապնդում մի արարքի համար, որը հենց ի սկզբանե չի կարող գնահատվել, որպես հանցան (այս պարագայում կատացվի, որ հետապնդումը կիրականացվի ակնհայտ ապօրինի): Եվ ամեն դեպքում, անձը, չի կարող ենթարկվել քրեական պատասխանատվության քանի որ այդ իրավիճակում կբացակայի քրեական պատասխանատվության «հավելյալ» հիմքը (քրեական օրենսգրքի նախագծի 16-րդ հոդված): Ասվածը ամբողջովին վերաբերելի է նաև քրեական դատավարության օրենսգրքի նախագծի 11-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված կարգավորմանը:

Այս առումով ուշադրության է արժանի Տ.Ղազարյանի տեսակետը, ով անդրադառնալով ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծային կարգավորմամբ առաջարկվող մասնավոր մեղադրանքի մոդելին քրեաիրավական հարաբերությունների ծագումը այդպիսի կարգավորման դեպքում փաստացիորեն պայմանավորում է տուժողի կողմից դատարան քրեական հայց ներկայացնելով [4, էջ 285]:

<sup>16</sup> Այս համատեքստում պետք է նկատենք, որ նախագծային կարգավորումներին մոտ կարգավորում նախատեսված է նաև Գերմանական քրեական դատավարության օրենսգրքով: Այստեղ տուժողը ունի առանց դատախազին նախապես դիմելու որոշակի շրջանակի գործերով (Գերմանիայի քր. դատ. օր. 374-րդ հոդվածով նախատեսված հանցագործություններով) մասնավոր քրեական հետապնդում իրականացնելու իրավունք: Այս դեպքերում մասնավոր մեղադրողն ունի հանրային մեղադրանքի գործերով դատախազին վերաբերելի կարգավիճակ (Գերմանիայի քր. դատ. օր. 385-րդ հոդված): Նա ունի նաև քրեական հայցը տնօրինելու լիազորություն՝ դրանից հրաժարվելու միջոցով (երբ առկա է մեղադրյալի համաձայնությունը (Գերմանիայի քր. դատ. օր. 391-րդ հոդված)):

**Սակայն, մյուս կողմից, պետք է նշել, որ անգամ այս նեղ շրջանակի հանցագործություններով չի սահմանափակվում դատախազի քրեական հետապնդման իրավասությունը. վերջինս ցանկացած պահի գործին ներ-**

Եվ եթե նախագծային ներկայիս կարգավորման դեպքում ստանում ենք հանրային շահի բացակայության պատկեր, ապա դատախազին վերապահելով մասնավոր մեղադրանքի գործերով սեփական նախաձեռնությամբ վարույթին ներգրավվելու հնարավորություն այն բոլորովին կփոխվի: Դատախազի մասնակցության հնարավորության նախատեսումն ինքնին կվկայի տվյալ գործերով հանրային շահի առկայության մասին (չէ որ դատախազը կարող է մասնակցել միայն **ուղղակիորեն հանրային շահի ապահովման համար**): Եվ նույնիսկ մասնավոր մեղադրանքի գործերով հիմնական մասնավոր մեղադրանքի ձևով հետապնդումը կազմակերպելու դեպքում (ինչպիսին է նախագծային կարգավորումը), մենք արդեն կխոսենք, տվյալ գործերով ոչ թե հանրային շահի բացակայության, այլ՝ հանրային շահի «ձևականացման» և դրա ու մասնավոր շահերի կոնկրետ դեպքում **նույնականացման** մասին: Այլ կերպ ասած այդ դեպքում հանրային շահը «ձևականացվում է» **ընդհանուր դեպքերում նույնանում** տուժողի մասնավոր շահի հետ, և տուժողի կողմից **ուղղակիորեն** իր շահերի պաշտպանության համար իրականացվող հետապնդմամբ **անուղղակիորեն պաշտպանվում է նաև հանրային շահ**: Սակայն, ինչպես արդեն ասացինք, դատախազին յուրաքանչյուր դեպքում հնարավորություն տալով ներգրավվելու այդպիսի գործերում մի կողմից կփաստովի ապրիորի այդպիսի շահի առկայությունը, մյուս կողմից՝ կստեծվի **ամեն կոնկրետ** դեպքում **հանրային շահը պետական պաշտոնատար անձի (դատախազի) կողմից ինքնուրույն գնահատելու հնարավորությունը**: Այսինքն արդեն դատախազի ներգրավման հնարավորություն նախատեսելով՝ դատախազը հնարավորություն կստանա առաջնորդվել «ոչ ձևականացված» հանրային շահով՝ ինքնուրույն գնահատելով այն: Բացի այդ կարծում ենք՝ անհրաժեշտ է նաև որոշակիորեն փոփոխության ենթարկել քրեական օրենսգրքի նաձագծի 16-րդ հոդվածը՝ դրանով նախատեսելով յուրաքանչյուր դեպքում դատախազի կողմից այդ գործերով հայց հարցուցելու հնարավորություն, կամ, որ

գրավվելու լիազորություն ունի (Գերմանիայի քր. դատ. օր.377-րդ հոդված):

թերևս ավելի ճիշտ է, ընդհանրապես «մասնավոր մեղադրանքի գործերի» շրջանակի կանոնակարգման հարցերը իրականացնել ոչ թե քրեական օրենսգրքով՝ այլ քրեական դատավարության օրենսգրքով (նախագծով)<sup>17</sup>:

Առաջարկվող կարգավորումը թույլ կտա «դուրս գալ» «մասնավոր դեղիկտի» տեսության «ճիրաններից» և վերը բերված հակասական իրավիճակներ առաջանալու հնարավորությունից:

#### Օգտագործված գրականության ցանկ

1. **Գաբուզյան Ա.Հ.** «Հանցանք» հասկացության օրենսդրական բնորոշման որոշ հարցեր // ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու / ԵՊՀ; գլխ. խմբ.՝ **Ղազինյան Գ.Ս.** - Երևան, ԵՊՀ, 2017
2. ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծ:
3. ՀՀ Վճռաբեկ դատարանի ԵԱԲԴ/0217/01/14 որոշում
4. **Ղազարյան Տ.**, Մասնավոր մեղադրանքի գործերով քրեական վարույթ նախաձեռնելու հիմնախնդիրները // ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների նստաշրջանի նյութերի ժողովածու. 2 (2) 2018, Երևան 2019

<sup>17</sup> Խորհրդային իրավունքում գերիշխել է, իսկ հետխորհրդային իրավունքում շարունակում է իր ուժեղ ազդեցությունը պահպանել քրեական դատավարությունն ու քրեական իրավունքը «ձև և բովանդակություն» հարաբերակցության մեջ դիտարկելու մոտեցումը: Հետևաբար «ձևի (քրեական դատավարություն) և բովանդակության (քրեական իրավունք)» այսօրինակ մոտեցումից էլ տրամաբանորեն բխեցվում է քրեական դատավարության «կախվածությունը» քրեական իրավունքից, և ամեն դատավարական ինստիտուտի համար, այս մոտեցման կողմնակիցները փորձ են անում «նյութական հենք» կառուցել: Մենք, սակայն, հակված ենք քրեական դատավարության առավելապես «կիսանկախ» մոտեցմանը, որով էլ պայմանավորված գտնում ենք, որ ոչ բոլոր դատավարական ինստիտուտները պետք է ունենան նյութաիրավական հենք: Այս համատեքստում, հիշատակված են արժանի անվանի մինչհեղափոխական դատավարագետ Ն. Ռոզինի հետևյալ խոսքերը. «Ո՛չ քաղաքացիական, ո՛չ էլ քրեական իրավունքից են դատավարական հիմնական ինստիտուտները ստանում իրենց դիմագծերը»: Հեղինակն իրավափոխումն արձանագրում էր, որ, դատական քննության նախապատրաստության կամ ապացույցների և նման այլ հարցերը նույնպես ինչպես քրեական իրավունքի, այնպես էլ քաղաքացիական իրավունքի հարցեր չեն: Հետևաբար սխալ էր համարում այն պնդումները, թե «քրեական դատավարության ինստիտուտները իրենց արմատներով բխում են նյութական քրեական իրավունքի բնույթից» [17, էջեր 10-11]:

5. **Մարկոսյան Մ.Մ.**, Քրեականացման և ապաքրեականացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Երևան, Լիմուշ, 2011
6. Քրեական դատավարության պարզեցման հիմնախնդիրները: Գիտագործնական ձեռնարկ / Հեղ. Խումբ: Գլխ. խմբ.՝ **Ա.Ղազարյան**, Երևան, «Աստղիկ գրատուն», 2011:
7. **Васильева Е. Г.** Уголовный процесс: догматико-аксиологическое исследование: монография. – М.: Юрлитинформ, 2013
8. **Кистяковский А. Ф.** О пресечении обвиняемому способов уклоняться от следствия и суда. СПб., 1868
9. **Ковтун Н. Н.** Соотношение частных и публичных начал в уголовном судопроизводстве РФ: время выбора // Государство и право. 1995. № 11
10. **Козлова А. Н.** Публичность как принцип уголовного судопроизводства: дис. ...канд. юрид.наук, М.: 2007
11. **Коняхин В. П.** Теоретические основы построения Общей части российского уголовного права. СПб., Юрид. центр пресс, 2002
12. Курс уголовного процесса / Под ред. д.ю.н., проф. **Л.В. Головкин**, - 2-е изд., испр. -М.: Статут, 2017
13. **Лопашенко Д. В.** Соотношение частного и публичного в уголовном праве, дис. ... канд.юрид. наук, М., 2018
14. **Покровский И.А.** Право и факт в римском праве. Часть 2, Генезис преторского права. – Киев, 1902
15. **Полянский Н.Н.** К вопросу об участии частных лиц в публичном обвинении (Принципиальная основания actio popularis в уголовном процессе), 1915 (<http://jurytrial.ru/media/files/library/file30.pdf>):
16. **Фон-Резон А. К.** О преступлениях, наказуемых только по жалобе потерпевшего по русскому праву. - СПб., 1882
17. **Розин Н. Н.** Уголовное судопроизводство. Пособие к лекциям (2-е издание, измененное и дополненное). - С.-Петербург, издание юридического книжного склада "Право", 1914
18. **Случевский В.** Учебник русского уголовного процесса. Судостроительство-судопроизводство (издание 4-е, дополненное и исправленное). - С.-Петербург, типография М. М. Стасюлевича, 1913
19. **Таубер Л. Я.** Жалоба потерпевшего при преступлениях неофициальных. Харьков: Тип. и лит. М. Зильберг и сыновья, 1909
20. Уголовный процесс. Под ред. **Чельцова М.А.** Москва. Юрид. лит. 1969
21. **Фойницкий И. Я.** Курс уголовного судопроизводства. Том I (издание 4-е). С.-Петербург, типография товарищества "Общественная польза", 1912
22. **Фойницкий И. Я.** Курс уголовного судопроизводства. Том II (издание 3-е, пересмотренное и дополненное). – С.-Петербург, Сенатская типография, 1910.

Տճանա/Հանձնվել է՝ 04.05.2020  
Քրեագիտության/Գրախոսվել է՝ 11.05.2020  
Մտնա/Ընդունվել է՝ 13.05.2020